

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հերկայ 1897 տարեշրջանի

Պոչկարիոյ համար տարեկան 10 ֆր
" " " " 1/2 " 5 "
Արտասահմանի համար " 12 "
" " " " 1/2 " 6 "
Կանխիկ վճարելի

Նամակ դրամ եռայլն խրկել հետեւեալ հասցեով

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՑ ԿԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Редакция на вѣстникъ

„Ирѣвункъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
ետ չեն դրկոշիր եւ յարմար դատ-
ուածներն միայն կը հրատարակ-
ուին ամբողջովին կամ մասամբ:

Շանուշմանց տոյր 20 սանքիւն
երեքէն առելի անգամներու համար
20 առ 100 գեղը կը լինի:

ՆՈՐ ԽԱՂԱԿՐՈՒԹԻՒՆ

Երբեմն եւրոպայ խաղաղութիւն
կը կազմակերպէր քրիստոնէու-
թիւնը Արեւելքի մէջ պաշտպանե-
լու համար իսլամներուն դէմ:
Անկէ ի վեր դարեր անցան,
մարդկութիւնը տակաւ լուսաւոր-
ուեցաւ նոր գաղափարներով, ու
գաղափարութեան ոգին ծաւալեցաւ
ժողովուրդներու ամէն դասակար-
գին մէջ. մէկ խօսքով, քաղաքա-
կրթութիւնը, ինչպէս կըսեն, հըս-
կայաքաղ յառաջդիմութիւն ըրաւ
և եւրոպական այս ամէն հիւնարի
բաներուն մեծագոյն արդիւնքը,
զոր այս վայրկեան կը վայելենք,
սա եղաւ որ եւրոպական տէրու-
թիւնները բարբարոս անցեալին ա-
ւանդութիւնները ոտքի տակ ա-
ռած, իրենց կարծիքով ներկայ
ժամանակին ոգին համապատաս-
խան և վայելուչ ընթացք մը կը
բռնեն՝ ի նպաստ իսլամութեան
խաղաղութիւն մը կազմելով օրու-
նաստանի դէմ:

Խաղաղութեան վրայ իր հզօր
հովանին կը տարածէ Գերմանիա,
եւրոպական այն երկիրը ուր արդի
լուսաւորութեան շառաւիղները ա-
մէնէն աւելի թափանցած են ժո-
ղովրդային ամէնէն ստորին խա-
ւերը. Գերմանիոյ անբաժան ըն-
կերն է Ռուսիա, օրթոտոքսու-
թեան վառարանը, և երբեմն հին,
տեղեւ ժամանակներու մէջ, Արե-
ւելքի քրիստոնէից պաշտպանը
քայլ առ քայլ իրեն կը հետեւի
Ֆրանսա, յեղափոխութեան հայ-
րենիքը, լուսաւորութեան մշտու-
հոս աղը, ազատութեան բնա-
վայրը:

Այս երրորդութիւն ինքնին
այնքան զօրաւոր և յանկուցիչ է
է որ իր ետեւէն կը ձգէ միւս մեծ
տէրութիւններն ու, որոցմէ մին
Մանչէսթրի բամբակեղէններէն
զատ բան մը հաշուի չառնելու հին,
բարի սովորութիւնն ունի, և միւսը
արդէն վաղուց անտի թուրքին
կուսակից գտնուած է ամեն ան-
գամ երբ նա պայքար մղեր է իր
քրիստոնէայ հպատակներուն դէմ:

Ահա այս է ինչ որ այժմ կը

կոչուի եւրոպական ներդաշնակու-
թիւն:

Նոր խաղաղութիւնն է այդ:
Գուցէ մենք կիսակիրթ Արեւել-
ցիներս, միայն մեր տգիտութեան
պատճառով անկարող ենք հասկնալու
թէ ազատախոհութեան և լուսաւոր-
ութեան գաղափարները հասած
եւրոպայ, կրօնական հին նախա-
պաշարումները մէկ կողմ նետելով,
կրնայ օգնութեան հասնիլ այլա-
կրօն տէրութեան մը, որ քրիստոն-
եայ ազգի մը հետ կը կուտի:

Սակայն ուրիշ բան մը կայ որ
մեր միտքը կը չփոխէ և կը գալ-
թակեցնէ, այն է, արգարութեան
և իրաւունքի զգացումը, որ մի-
այն լուսաւորեալ ազգերու մենա-
շնորհը չէ, այլ բնածին է ամեն ժո-
ղովրդի անխորի:

Արդ իրաւունքի զգացումը մեզ
բարձրաձայն կըսէ թէ նոր խա-
ղաղութիւնը անիրաւութեան և
անբարոյականութեան քստմեղի
մարմնացումն է, իր գոյութեան
նպատակն ըլլալով չէզոքացնել այն-
պիսի ժողովրդի մը վնասի շան-
քերը որ զենք կը վերցնէ իր, հա-
րստահարեալին՝ զաւակները խող-
խողող, մարդկային արժանապա-
տութիւնը ոտնակոխ ընող և ըն-
տանեկան պատիւը սրբապղծող
բռնապետութեան դէմ:

Եւ ցորչափ հանթօ և Սօլդա-
րի չյաջողին մէյմէկ ճառ խօ-
սելով մեզ համոզելու թէ թուր-
քը իրաւունք ունէր հարկու-
հաղարներով անմեղ Հայեր ջարդե-
լու և թէ օրջները պարտական էին
իսլամական ամենեն սոսկալի վայ-
րագութեանց լռիկ միջիկ համբերե-
լու, մեր համոզումներ և ապագային
վրայ մեր հաւատքը անխախտ պիտի
մնան: Մենք կը շարունակենք հա-
ւատալ թէ արգարութիւնը բա-
ցարձակ զօրութիւն մըն է որ ուշ
թէ կանուխ անվրէպ կը պատժէ
իրեն դէմ մեղանշողները, ո՞վ և
ինչ ալ ըլլան, բացառութիւն չը-
նելով նաեւ մեծ տէրութեանց խա-
ղաղութեան համար:

Կը նախընտրենք մեր արեւել-
եան տգիտութեան, սակայն նաեւ
այս հաւատքին մէջ միտք քան կոր-
սնցնել արգարութեան և իրաւունք:

քի ամեն զգացում հետեւելով եւ-
րոպական արդի անբարոյական
քաղաքակրթութեան, որոյ գործ-
նական արդիւնքները մեզ նող-
կանք միայն կազդեն:

ՎԵՐԱԴԱՐՁ

Կիրակի, Կէօ օրէն յետոյ, վառ-
նայի նաւամատոյցին վրայ արտա-
սովոր իրարանցում մը կը տիրէր,
նմանօրինակ այն ոգեւորութեան
որ ասկից իբր եօթն ամիս առաջ
կը պարզուէր միւսնոյն տեղը, երբ
պոլսահայերը նաեւրը լեցուած
Պոլկարիա կը վազէին:

Հիմակ, այդ ահեղ ալիքին անդ-
րադարձումը տեղի կունենայ. ետ
կը դառնան հայերը վառնայէն
կամ Պոլկարիայէն: Պօլիս կեր-
թան: Գացողները անշուշտ բարե-
կեցիկ դասուն չեն վերաբերի:
Գլխաւորապէս թշուառութեան ճի-
ւանը չիյնալու վախով համակուած
դասն է որ այսպէս ինքզինքը
թուրքիոյ ոստանը կը նետէ՝ փր-
կուելու համար չքաւորութենէ:

Արդարեւ ուրիշ ու է չարժա-
ւերթ չի կրնար կենալ այս վերա-
դարձին համար: Հայ մը ցորչափ
կարենայ իր հացը ճարել Պոլկա-
րիոյ աղատ հողին վրայ, չպիտի
փափագի լոկ հայրենաբաղձու-
թեան առարկութիւնով ելլալ եր-
թայ այնպիսի երկիր մը ուր ոչ ոք
իւր ունեցածին տէրն է նիւթապէս
բարոյապէս:

Տարակոյս չիկայ որ կենքի
պահպանութեան բնազդէն էր մարդ-
կային այն հոսանքին վարչը: Պոլ-
սոյ մէջ հայ կը ջարդէին, արձակ
համարձակ, աներես եւրոպացիին
աչքին առջեւ: փախչելէն ուրիշ
ճար չիկար: Շատեր փախան:
Բայց ահա հիմակ ալ ետ կը դառ-
նան, կերթան հոն ուսկից խուսա-
փած էին ջարդուելու համար:
Ինչո՞ւ: որովհետեւ տաքերն եւ
կան, ձմրան խստութիւններն հե-
ռացան գացին, ու օրիորդ Ֆրայ-
զըր իր բարեգործական կայքը
վերջնականապէս պիտի վերցունէ
քիչ ատենէն վառնայէ: Փոր կը շ-
տացնող, կունակ տաքցնող հեշտին
տարրն անհետանալէ յետոյ, մարդ

ինչպէս կրնայ, աշխատելու վար-
ժութիւնը կորսնցուցած, նոյն մի-
ջավայրին մէջ բնակութիւնը չա-
րունակել:

Արդեօք հոգին սուրբ ի՞նչ
սոյ վրայ ու հայ ազգին գոյու-
թեան օպառնացող վտանգը վանեց
հեռացուց անկէ: Հրաշքներու
դարն անցած ըլլալով, ասանկ բան
տեղի չունենար այլեւս:

Արդեօք տարօրինակ առատու-
թիւն մը, գործերու, առեւտուրի
անսովոր յաջողութիւն մը մասնա-
ւոր հրապոյրներ կընծային մեզ
գաղթական հայերու՝ ակամայ
նետուելու համար վտագորի խա-
րուսիկ եզերքներուն վրայ:

Ոչ. ընդհակառակը, վերջին մէկ
երկու ամիսներու միջոցին Պոլսոյ
և առ հասարակ թուրքիոյ մէջ ա-
ռեւտրական ամեն տեսակ գործերը
մօրացած հանգամանք ունին, և
դրամի շրջաբերութիւնն այն առ-
տիճան նուազած է որ ամեն տե-
սակ վաճառքներու գնոց վրայ մեծ
անկումներ տեղի ունեցած են, ինչ
որ երկրի մը տնտեսական կացու-
թեան համար յոյժ չարագուշակ
երեւոյթ մըն է:

Ըսելէ որ թշուառութեան սեւ
ուրուականէն խուսափելու նպա-
տակով Պոլիս երթացողները ինք-
զինքնին առատաբաւ զիւրակե-
ցութեան մը գիրկը չպիտի գտնան
հապա, ոչ միայն այդ մի եւ նոյն
ուրուականը պիտի դիմաւորեն,
այլեւ կեանքի անստուգութեան ու
անապահովութեան զարհուրելի
անձկութեանց մէջ թաղուած պի-
տի մնան միշտ:

Ինչ է ուրեմն այս խեղճերը
գէպ ի Պոլիս մղող պատճառը: Սա
մեր վերը թուած մէկ երկու պա-
րագաները բացարձակապէս գոյու-
թիւն չունին: Աշխատելու կամք
ունեցող բազմաթիւ երկիրներու տե-
սակին մէջ խտրի չի գնել. թուր-
քիա եղեր է, Պոլկարիա եղեր է
կամ ուրիշ տեղ, իրեն համա մի-
կունոյն բաներն են, կը բաւէ որ
աշխատելու ներքին կրակն անչէլ
մնացած ըլլայ իր մէջ:

Քաղաքական աշխարհին հորի-
զոնը հիմակ ամեն տեսակ աւելի
ծածկուած է սեւ մթին ամպերով,
որոնք կապառնան ուրական ըմ

այսինքն երկրի վրայ, Եւ եթէ նկատի առնենք թէ այս փոթորիկի պայթման պահուն, անոր էն ուժ, զին մասը օսմանեան տեղութեան վրայ պիտի յորձանապտուտքի, դիւրին է գուշակել թէ հայերուն համար ո՛րչափ աննպաստ բան կըլլայ այդ միջոցին գտնուիլ հոն։

Այս տողերը գրելով մեր նպատակը չէ ստիպել Պոլսի արտաքին շտաբի հայ գաղթականները որ Պոլսի շերտին, այդ հեղինակութիւնը և իրաւասութիւնը մեզ չեն պատկանիր։ Բայց իրրեւ հայ, որ ամեն բանի մէջ իր ազգին կենսական շահը կը փնտռէ, կը կարծենք թէ այս մակնուժը բանաւոր պատճառներու վրայ հիմնուած չէ ու ներկայ ժամանակին անկերեւ պայմաններուն մէջ շատ նպաստաւոր վախճանի մը չի կրնար յանգիլ անոնց համար որ կուզեն թուրքիոյ մայրաքաղաքին արեւմտայն փողոցները տեսնել վերստին։

ԱՐՁԱԳԱՆԳ

Դարձեալ Աւագ ուրբաթ, բաղցր տապաւորութեան մը ներքեւ է որ զոր իրիկուն ըրինք։

Գիտէք թէ գերեզմանատունէն գաւազան համբուն վրայ, քաղաքին յաղթական կամարին մետրիկ կը տարածուի։ Պէտք մտաւ զայն կան ձեռքարուսներու գործարարը։ Գաղթականաց կեանքին վիճակը թարական մէկ կողմէն էր զոր գիտեցինք քանի մը բարեկրթներով։ Գործարարին յարգելի Տնօրէնը Պ. Յովակիմ Յովակիմեան իր սովորական բարեացակամութեամբ մեզի պատուանիտեց և հաճեցաւ ցոյց տալ գործարարին զանազան մասերը և արտադրութեանց նմանը ներքը որոնց վրայ սքանչացանք։

Արեւելեան ընտիր երկներանգ հապեղանք, նրբակերտ լապտերներ, ճաշակաւոր աշտանակներ, մեծ ու պզտիկ զանգակներ, հեշտօրօր կախանիղիներ (համաք) և ուրիշ շատ մը պէս պէս երկաթէ և պղինձէ առարկաներ, ընդհանրապէս շատ-սիրուն ճաշակով մը պատրաստուած։ Զի մոռնանք յիշել նաև գործարարին մէկ ուրիշ արտադրութիւնը որ հակառակ իր արտաքին լեթի կերպարանքին՝ բոլորման դանձել կը պարունակէ և քիմքը փայփայելու յատկութիւնը ունի։ Այն է պատուական րահաքի յօքոսմը որ ամեն կերպով կըրնայ մրցիլ Հաճի Պէքերի հաշակաւոր շաքարեղէններուն հետ։ Այոնց յատկացուած տուփերն ալ մեզախիքներով զարդարուած արուեստի ներութիւններ ըլլալով տեսնէ ըսել թէ պարունակողն ալ արժանի էր պարունակողին։

Բոլոր այս ապրանքները սահմանուած են խրկուելու Եւրոպա ուր ապահովեալ սպառում մը ունին։

Ներքի է անշուշտ դիտել տալ թէ այս առարկաները քիչ բացառութեամբ տեղական սպառում ալ կրնան ունենալ, բան մը որ գործը աւելի կարեւոր կռուանի մը պիտի յանգեցնէր ի մեծ գոհունակութիւն գործակարօտ գաղթականներու։ Զի, վերջապէս, հոս ալ լօքում կ'ուտեն, մոմ կը տընկեն, զանգակ կը հնչեցնեն։

Եւ յետոյ, այդ առիթ մը պիտի ըլլայ ցոյց տալու բնիկ տարրին թէ՛ Հայերը յիշուի հնարամիտ և չարքաշ նկարագիր մը ունին որ իրենցմէ անբաժան կը մնայ նոյն իսկ մեծագոյն տառապանքներու տեսն, և թէ՛ կրնան արուեստներ, ներու և քաղաքակրթութեան յառաջդիմութեան սատարներ հանդիսանալ այն երկրին մէջ ուր կ'ապրին։

Վերջապէս, չէ՛ կարելի այդ բոլոր արտադրութիւններով փոքրիկ ցուցահանդէս մը կազմակերպել նոյն իսկ գործարարին շէնքին մէջ։

Եթէ արգելիչ շատ չուրջ պատճառ մը չիկայ, յարգոյ տնօրէնը որ գործակալութ հօր մը սէրն ունի գործարարներուն և գործարարին վրայ, թերեւս ի մտոյ կատարէ մեր այս իղձը որ ապահովարար ամենուն ալ է։

Այս ցուցահանդէսին անշուշտ սիրով կը մասնակցին նաև վառնայի հայ նկարիչները որոնցմէ մէկուն, Տիար Նիկողոս Սիմակեանի աշխատարանը այցելելու առիթն ունեցայ վերջերս։

Տիար Սիմակեան որ գրեթէ ինքնօգնութեամբ սորված է իր չքնաղ արուեստը և որ յաջողակ նկարիչ մըն է, ինծի շատ մը իւզաներկ պատկերներ ցոյց տուաւ որոնց մէջէն վերափոխման պատկեր մը մասնաւոր ուշադրութիւնս գրաւեց։

Հոն կը տեսնես Տիրամայրը որ ոսկեծոյլ ամպերու մէջ, ու սիրուն հրեշտակներէ շրջապատուած՝ մեղմիկ կը սլանայ դէպ ի երկնից բարձունքները, կանխառ ուղղելով դէպ ի վեր խանտաղատանքի և կարօտոյ այն անհուն նայուածքներէ մին որմէ դիտողը կը յափշտակուի։

Կրօնական համեստութեան դրոշմը կրող այդ վերափոխումը յարմար առիթ մը կը ներկայացնէ այն ջերմեռանդ ազգայիններուն որոնք թերեւս միջոց մը կը փրկուեն Եկեղեցիին օգտելու այսպիսի պատկառատու պատկերով մը, որով քաջախիբա՞ծ պիտի ըլլան նաև հայ արուեստագէտ մը։

Այս առիթը պարտաւոր ենք յիշել թէ վառնայի մէջ ունինք նաև ուրիշ յաջողակ նկարիչներ որոնցմէ ոմանք արդէն երկար առիթն է ի վեր ճանչցուած ու գնահատուած են իրենց անուրանալի տաղանդին և գործերուն համար։

Գամբը-Արշալիր

"ԱՍԼԱՆ ԵՒ ԶԱՐՈՒՀԻ"

Անոնք որ անցեալ ուրբաթ գիշեր փութացած էին ներկայ գտնուիլ Կամեր-Արշալիրի յիշեալ թատերախաղին ներկայացմանը, դուրս ելան սրտերնին ուռած, աչուընին արտասրալից։ Վասն զի երեք չորս ժամու միջոցին մէջ իրենց աչքին առջեւ պարզուած տեսեր էին ԺԹ. դարուն հայաստանցիին վարած կենցաղը իր ամենէն ահաւոր մեղքութեանը և անթերի ճշգրտութեանը մէջ։

Խաղին նիւթը շատ պարզ էր, և մինչև իսկ կրնայ ըսուիլ սովորական, գոնէ մեզ տառապեալ հայ յիշու համար։ Եւ ճիշդ այս պարագան էր որ վար ստուգուց հանդիսատեսներուն շղային դրութիւնը։

Հայաստանի մէկ գեղն ենք։ Ասլան և Զարուհի, մեր գեղական ազնիւ տիպարներուն երկու վճիտ ու ամբիծ նմուշները, սիրահարուած են իրարու՝ իրենց հովուերգական կեանքին բովանդակ խանգովն ու անսահման ուժգնութեամբ։ Իրենց սրտերուն այս անխցելի ձուլումն յայտնող այն տեսակցութիւնը որով կը բաղուի Ա. Վարագորը, հիանալի է իր միամիտ և անհունապէս անկեղծ արտայայտութեամբը։ Վերջապէս պիտի ամուսնանան, երջանիկ պիտի ըլլան, իրենց սպազայ լուսաւոր կեանքին հեռուստները կը պատկերանան իրենց աչքին, ո՞վ պիտի արգելք ըլլայ այդ երանալի կենակցութեանը, ո՞վ պիտի համարձակի։

Բայց քիւրտները։ Հարսնիքը սարքուած է հարսնետոնները խորխոսեալ մէջ։ Ահա քիւրտները կուգան, ներս կը մտնան, կուզեն հարսն առեւանգել։ Հարսնետոններն, ահաբեկ, կուզեն համուլի վայրագ աւազակները, որոնք ինչ զինքն ինչ հեռանալ առանց այդ գեղանի աղջկան։ Ասլան, կատղած, կուզէ դիմադրել, բայց քիւրտները կը յարձակին անոնց վրայ և փեռան ու անոր եղբայրը վիրաւորելէ յետոյ, կը յափշտակեն Զարուհին՝ անոր մոյքերն ընդդիմութեան հակառակ։

Գ. վարագորին մէջ թուրք գայմազամն երեւան կուգայ, իր պաշտօնաւոր աւազակի և գձուձ կաշառամովի ամբողջ կեղտութեամբը։ Հարսն առեւանգող քիւրտները իր մեղսակիցներն են։ Հեղինակը շատ ճարտար կերպով կը պարզէ այդ թուրք պաշտօնէին սքողեալ գործակցութիւնը։ Հայ տարրին դէմ մղուած հարստահարութեան մէջ, քիւրտները կուգան իրեն կը յանձնեն իրենց կողոպուտին այն մասը որ օսմ. կառավարութեան պարկեշտ ու հաւատարիմ պաշտօնէին իրաւունքն է։ Այդ պահուն բողբոջու կուգան հէք Ասլանն ու իր եղբայրը, վիրաւոր, յուսա-

հատ, իրենց դէմ հղած ահուկ անիրաւութեան համար գոհացում կուզեն։ Հարսը գողցուած էր քիւրտներէն։

Զարուհի, որ քիւրտներուն ձեռքէն խոյս տալէ յետոյ բռնուած էր թուրք զինուորներէն, ներս կը բերուի այդ միջոցին, և ինքզինքը կը գտնայ իր նշանածին դէմը։ Տեսարանն յուզիչ է։ Ասլան, խելայեղ, իր սրտին բոլոր դառնութիւնը կը թափէ անարգ գայմազամին դէմ, ու ահարկու սպառնալիք մը արձակելէ յետոյ կը փախչի կերթայ։

Մինչև երրորդ արարուածին վերջը եղբերգութեանց շարք մըն է որ փոխն ի փոխը կատաղութիւն և սրտախուլում կը պատճառէ անկանտեսին։ Բայց Գ. արարուածը կուգայ զովութիւն և ուրախութիւն սփռելով։ Ասլան, անօրէն հարստահարութեան և անպատիժ բարբարոսութեան լուծը թօթափած, վրէժխնդրութեան կրակովն առլի, լեռները քաշուած է իր համախոհ ընկերներուն հետ խուլ պայքար մը մղելու համար կառավարութեան դէմ։ Հայ հրօքախումբը կերեւայ իր անզուսպ թափովն ու քինախնդրութեամբը։ Գայմազամը, իր մէկ ճամբարը թեան մէջ, հայ հրօքախնդրուն ձեռքը կիցնայ որոնք Գայլ Վահան կան հնարքով մը զայն վեցցնել կուտան թուրք զինուորներուն ձեռքովն իսկ։

Եւ արարուածը երեւան կը բերէ Զարուհին, խելագար, լեռները թափառուն, թշուառ։ Ասլան, իր բռն հրօքակ, անոր կը հանդիպի և կը սոսկայ զայն իսնդ տեսնենիւմ։ Եւ ահա քիւրտները կուգան վրէժ լուծելու։ Զարուհին ծնողքը որ լեռներն ինկած են իրենց աղջիկը փնտռելու, անոնց ձեռքը կիցնան, ու երբ քիւրտները կը պատրաստուին զանոնք եւս այրելու ինչպէս այրած էին Ասլանին եղբայրը, Ասլան վրայ կը հասնի, կը զարնէ կը մեռցունէ քիւրտներէն մէկ քանի և մնացածները կը բռնէ։ Հիմակ հոն են դարձեալ, հարսն ու փեսան, իրենց ծնողքն ու հարսնետոնները։ Զարուհին, թէեւ խնդ, կը վերստանայ իր մութին առողջութիւնը, այն տապաւորութեան ազդեցութեամբը զոր իր սիրելիներուն յեղակարծ երեւումը յառաջ կը բերէ իր վրայ։

Ու խաղը կը վերջանայ։

Գամբը-Արշալիր լաւ ընտրութիւն ըրած է իր թատերախաղին նիւթին մէջ, զոր կատարելապէս յաջողած է գրի առնել։ «Ասլան և Զարուհի»ի արժանիքը մեծ է նախ սա տեսակէտով որ մեր կեանքին ամենէն կսկծալի ու ամենէն շօշափելի վէրքը երեւան կը հանէ, ու սիրտերու մէջ վառ կը պահէ վրէժխնդրական զգացումը ընդդէմ անօրինակ բռնութեան մը յետոյ սա տեսակէտով որ մեր գրա-

կանոններն իրենց իրաւունքն անձուկ ճիւղին կուգայ կարեւոր գաղափար մը տալ, ցուցունելով թէ ինչպէս և ինչ ոգիով պէտք է պատրաստել այսպիսի առամի մը հիւստածքը։

Բայց չենք ուզեր թէ բոլորովին անքննադատելի հեղինակութիւն մըն է իր մանրամասնութեան մէջ թերութիւններ ունի զորս անշուշտ հեղինակը ինքն ալ նշմարեց բնմին վրայ, երբ իր անձնաւորութիւնը ներկանք տուին խաղին։ Բայց այս թերութիւնները՝ ամբողջին գեղեցկութեանը քով կը թեթեւանան ու գրեթէ անշուշտ կը դառնան։ Հեղինակը ինք կրնայ այդ պակասները դարմանել ու երկրորդ անգամ իրիւ բոլորովին կատարեալ գործ մը ներկայացնել խանդավառ հասարակութեան։

Գրողներէն քրոնիկագրի մը համար գրեթէ անքաւելի միզք մը պիտի ըլլար իր վերջակէտը դնել առանց յիշելու այն երկու անձերը որոնք կիանք, կենդանութիւն և յաջողութիւն տուին այս խաղին։

Օրիորդ Քնար՝ որ Զարուհիին դերը կատարեց, պիտի համարձակիմ բնի թէ թատերական արուեստը այնպէս մը իւրացուցած էր այս դերին մէջ ու այնպէս մը ի հանգէս բերաւ որ եւրոպացի շատ գերասանահիշեցողներ խախտեցին իր շարժերը։ Օր. Քնար քնարերգեց Զարուհիին, հիմա տուաւ անոր, գրաւեց բնմը, գրաւեց թատերասրահն ամբողջ ու արցունք ժայթքեցուց աչքերէ։ Օր. Քնար կոչուած է ըլլալ մեր բնական հաղորդակտ աստղերէն մէկը։ Գիտնա՞նք մենք անոր յարգը և կարեւորանք գնահատել անոր մեծ կարողութիւնը որ պահուած կը մնայ իր մէջ և զոր շատ քիչ անգամաւ ռիթմ կունենայ երեսան բերելու ու կատարելագործելու։

Կը շնորհաւորենք հայ դերասանահիշին իր զուտ հայկական գերին մէջ, զոր այնքան զեղուն զգացմամբ կատարեց, և կը մաղթենք որ այսուհետեւ առիթ ունենանք զինք վերստին տեսնելու այսօրինակ ազնիւ ու բարձր դերերու մէջ։

Պ. Պապեան կատարեալ Ասլան մը եղաւ։ Խղճի մտօք կատարեց իր դերը, որուն ամէն երանդները ճարտարօրէն ի վեր հանեց։ Օր. Քնարին հետ զուգընթաց յառաջացաւ։ Կը շնորհաւորենք զինքը, ինչպէս նաեւ այն դերասաններն ու արուեստասէրները որոնք քիչ շատ լաւ կատարեցին իրենց դերերը։

Ե.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պօլիս, 18 Ապրիլ

Տատանաւ բաշա քաղաքական ժողովի ատենապետութեան կոչուած օրէն ի վեր իր բոլոր ճարտարութիւնը կը թափէ իրարու հետ հաշտ

ցոյց տալու տէրութեան և հայ ազգին շահերը, գոնէ ինչպէս ինք այս վերջինները կը մտնէ արժանահասարակ աղբիւրներէ քաղուած տեղեկութիւններէ դատելով կարելի է առանց չափազանցութեան ըսել թէ նա այս գործին մէջ աւելի մեծ դժուարութեանց կ'ընդհարի քան երկրին արտաքին քաղաքականութիւնը վարելու մէջ։ Յաջողած ըլլալով իր հաւատարիմ պաշտօնեայ և հպատակ՝ Սուլթանի վստահութիւնը շահել, կարող է շարունակ մաքառել այն յայտնի և գաղտնի ազդեցութեանց դէմ, որոնք կուգին Պատրիարքարանի գործունէութիւնը ջլատել որպէս զի գաւառաց հայ վարչութիւնը օրինաւորապէս չլիարկազմուին իրենց գլուխը ունենալով առաջնորդ մը և կարօտեալներուն նպաստի բաշխման գործը որքան կարելի է դժուարանայ ու հայ որբերը ապաստանարան ու պաշտպանութիւն չգտնեն։ Եթէ Պատրիարքարանը ցարդ կրցաւ փոքր բան մը ընել ի նպաստ վարչական կազմութեանց և որբերու պատասպարման տան և գաւառները, հայ բաշային ջանքերուն, ինչպէս և այն քաջակերութեան շնորհիւ է զոր ինք կուտայ Պատրիարքին։

Թօգատի կոտորածը բաշային ըրած հաշիւներուն բոլորովին հակառակ էր։ Իր հաշտարար քաղաքականութեան մահացու հարուած մը կուտար։ Ըսելու առնելու պէս իր պատճառարանեալ հրաժարականը կը պատրաստէ և զայն Սուլթանին մատուցանելու համար ուղղակի պոլսոյ կը դիմէ։ Ինչպէս պէ՛, Լուսինի աղա և ընկ. իրար կանցնին, սրովհետեւ Սուլթանի կամքն է որ Յարութիւն բաշա վարչութեան գլուխը մնայ։ Երբեք պաշտպանները շատ աշխատելէ ետք կը յաջողին պաշտօնաթղթերով և այլ միջոցներով բաշան համոզելու թէ Թօգատի կոտորածը քաղաքին միայն իսլամներու ստորին դասակարգին մոլեռանդութեան արդիւնքն է, որոյ առջեւ առնելու համար տեղական կառավարութիւնը շատ աշխատած և կրցած էր արգելք ըլլալ աւելի մեծ արիւնհեղութեան մը, որ իսկական դիտումն էր յարձակող խուժանին։ Աւելի ճիշդ կըլլայ ըսել որ Յարութիւն բաշա Երջարգի մէջ իր առջեւ դադար այնպիսի անակնկալ և իր փաստ ճարպիկորէն նախապատրաստուած հանգամանքներ սր ստիպուեցաւ ցոյց տալ թէ ալ համազուած էր որ Թօգատի կառավարութիւնը գաղտնի մաքնակցութիւն մը չէր ունեցած կոտորածին մէջ։ Բաշան ետ կեցաւ իր հրաժարէն և խնդիրը փակուեցաւ։

Եթէ գործը այս կըքը չունենար և հրաժարականը ընդունուէր, ն. վստահութիւնը մտադիր է եղեր, ինչպէս իրազեկ անձ մը զիս վստահացուց, ամենախո-

նարհ ու տիրուէր ձեռով մը խնդրել Սուլթանէն որ ընդունի իր հրաժարը նաեւ արտաքին գործոց նախարարութեան խորհրդականի պաշտօնէն։

Ասկէ, նոյնպէս և ուրիշ պաշտպաններէ կրնանք հետեւեցնել թէ Տատանաւ բաշա թէեւ իբր պահպանողական գաղափարներու տէր մարդ՝ հայ ազգին համար լաւագոյն քաղաքականութիւնը կը նշկատէ օսմանեան գահին հաւատարիմ մնալով ջանալ կայսեր շնորհներուն և համակրութեան արժանանալ, սակայն յանձն չառնել երբեք, ուրիշ հայ ազգի պաշտօնեաներու նման դաւել, այսինքն գիտակցաբար գործել իր ազգին դէմ, յոգուտ տէրութեան, որոյ հետ կապուած են իր անձնական շահերը և փայլուն դերքը։

Տխուր երեւոյթներու շարքին մէջ որոնք երեւան եկան մեր ազգ. ներկայ դժբաղդութեանց միջոցին, դասել պէտք է նաեւ սա իրողութիւնը թէ Պատրիարքին համար շատ դժուարին գործ մը դարձած է գաւառները երթալու յօժարութիւն ունեցող առաջնորդներ ճարել։ մեր վարդապետներ և եպիսկոպոսներ՝ հազուադէպ բացառութեամբ՝ չեն ուզեր պաշտօն ստանձնել գաւառներու մէջ, ուր ճիշդ է թէ այսպիսի ժամանակ մը ընդհանրապէս իրենց կը սպասն վիշտ ու տառապանք։ սակայն մի թէ հայ կղերին առաջին պարտականութիւնը չէ՝ ժողովրդին ուրախութեան ուրախակից և վիշտերուն վշտակից ըլլալ։ Կարծես միայն լաւ օրերու հովիւ ըլլալու համար ձեռնադրուել են այդ անպարտաճանաչ անձինք։ Երեւոյթը գալթակցեցուցած է Պոլսոյ ժողովուրդը որոյ նախկին յարգանքն ու անհամբովութիւնը դէպ ի եկեղեցական դասակարգը արգէն այնքան նուազած է որ մօտ ժամանակ կրնայ գէրօի աստիճան հասնիլ, եթէ մեր վստեղութիւնը վերադարձնելու շարունակեն դժկամակութիւն ցոյց տալ հայաստանի ժողովրդին խորին յաւերժական մասնակցից ու սիրովիչ ըլլալու։

Այն ժամանակէն ի վեր երբ հայ բանտարկեալներու մնացած մասնաւոր Սուլթանին հրամանով արձակուել սկսան՝ Հայոց դէմ կառավարական խտրութիւնները զգալապէս մեղմացան։ այս բանին նպաստած է նաեւ պաշտօնական շրջանակներու մէջ տիրող այն կարծիքը թէ ոստիկանութիւնը պարտի հիմա իր ամեն ջանքերը նուիրել մի միայն յունական շարժումներուն վերադարձը հսկողութիւն մը ընելու։ Ասով հանդերձ շատ հաւանական կը կարծուի թէ յունաթուրքական պատերազմին առթիւ թուրք զինուորներու զրօշակի ներքեւ կանչուիլը նոր ազդեցութիւն պատճառ կ'ըլլայ Հայաստանի գիւղերուն մէջ, որոնք, ինչպէս ուրիշ պատերազմներու ժամանակ, այս

անգամ ալ պիտի ենթարկուին անշուշտ տեղափոխուող զինուորներու շահատակութեանց։

Թրքական զէնքերու յաջողութիւնը, որոյ մանրամասն լուրերով լեցուն են թուրք լրագիրները, ուրախութեամբ և հպարտութեամբ կը ընուն բոլոր իսլամները։ Բարեկիրթ կոչուած դասակարգը անուղղակի կեդրոնով և սքողեալ ձեւերով, իսկ ստորին դասակարգը բացէ բաց և անքաղաքավար կերպով սկսած են յոխորտալ քրիստոնէից դէմ։ յոյն ազգը պատերազմով ոչնչացնելու գաղափարը հետզհետէ կը տարածուի թուրք խելագատակներու մէջ։ Իսկ Հայը եթէ ոչ իրապէս ոչնչացնել, գէթ յաւիտենական ստրկութեան մէջ պահել ի պատիւ իր յանգստեան թուրք թուրքերուն համար արգէն վճռուած բան մըն է անգաւառելի կերպով։

ԿԱԶԵԹԱԼԱՐՆ
Ե Ֆ Ե Ա Ր Ը

Պիղմարգըն միւրեւթիւնի էֆ. քեարը օլան Համպոյրկէր Նախրիխ. քէն նամ կազէթանըն պէյանը. նա կէօրէ, ինկիլթէրա՝ տէվէթ. լէրին թիւրքիա իշլէրինէ միւտա. խէլէ իթմէլէրի իշլէն՝ Բարիս վէ վիէննա մէհաֆիլինտէ էզէր ճի. հէթ չալըլմագտա օլուպ, թիւրքիաի կիւն էվէլ մահվ իթմէր վէ պու եօլլէ պիր էվրորա մահարէ. պէսի աշտըրմագ արդուսընտա պու. լընըյօր. պուստա ինկիլթէրանըն մագսէտի իսէ՝ մահարէպէ գարը. շըգըլընտա Սըսըր թէմամը իլէ եուտուպ հազմ իթմէր վէ ճէնու. պի Աֆրիգատա քէնտի վիւնընը իլէրի կէօթիւրմէք տիր։

Մէնաֆիլի ումուսիլլէնին խիւս. ֆընտա օլարագ, Շարգտա ինկիլթէրա բօլթիգատընը Աւստրիա իլէ պիլլէտիրմէսինտէ, թիւրքիանըն մահվիլլէթինէ սէպէպ օլմագ իլէ պէրապէր, Աւստրիա իմրէ. թաթօրըլընա խուսուսի պիր թէհ. լիքէ աշմըլ օլմագ տըր. Մ. Պիղմարգըն կազէթասը պու հօգթայը Աւստրիա հիւքիւմէթինէ իսթար իտէրէք տէմիլ տիր. «Թիւրքիանըն մոսվիլլէթի իլէ պէրապէր Աւստրիա տաիլի թուրա սէվահի. լինտէ պիր էյի հալտէ պուլընմա. յաճագ տըր, հասըլթի պու կիւն թիւրքիա էվրորա գըթասընտա պուլընըյօր։»

Յրանքֆոնդրէր Զայրուսի տաիլի տէվէթլէրէ շու եօլտա իսթարութ. տա պուլընմըլ տըր. «Էկէր Եու. նանիսթանա պիր կէօնա միւսատտէ վէրիլը իսէ՝ Սօֆիատան վէրիլէն պէյաննամէ կիպի, պիւթիւն Պալգան հիւքիւմէթլէրին տաիլի հիւ. սէհապ օլմագ արդուարը թահրիգ օլընաճաղընտան մահարէպէնին էօ. նիւնիւ ալմագ միւրքիսիլ օլմագ տըր։»

